33. ՔԱՋԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԽԵՔՅԱԹ

Կէղի, չէղի իրիկ ու կնիկ մի կէղի։ Գարուն ա գելին, ուրանց լուցք ելծին ու կէրթան ուրանց վար ու ցանք կէնին։

Մարդն կվարա, կցանա, կցաքա։ Կխըլսի, կթորկա գիգա տուն։

Փել մի կմնա ըտ արտ կկանչնա։ Մարդ կեսա. «Պտի հ՚ելիմ էրթամ իմ արտ ճրիմ»։ Կէրթա ճուր կբերա, զարտ կճրա, զէն կտեսի օր, կարմիր օձ մի ծրկեն հ՚ելավ ու ծրկի բոլոր զաղեց ու գնաց (ծակի բոլորտիքը կլոր գիծ մը քաշեց)։ Մարդն կեսա. «Իդա օձի տակ բան կեր, օր թե իդա ծրկի բոլոր զաղեց ու գնաց»։ Զէն տեսավ օր սև կոլ բարակ մրռդալ օձմ էկավ, քրքջաց, քրքջաց էն զաղի մոտ, իդա հախս խորոտիկ կարմիր օձմ հ՚ելավ դուրս, փաթվան հ՚իբար։ Տղեն ինքն ուրին կեսա՝ «Իմ խիրեն (սիրտս, խիղճս) կաբուվ չէնա, օր թը էդ սև մուռդալ օձ փաթի իդա կարմիր խորոտիկ օձին։ Կեսա. «Ես պտի զարկիմ իդա սև օձ սպանիմ»։ Ուր թիակն ուր ծեռն ա, մեկ թիակով կզարկա սև օձուն, չի քիսի սև օձուն, կքիսի կարմիր օձուն, պառեկ կկոտրի։ Կարմիր օձ կէրթա ուր ծակ, սև օձ լէ կդառնա կէրթա։

Էդ ճըրտքվոր (ջուր արող) կքրպոթի, կեսա. «Ափսո՜ս էն կարմիր օձուն, օր պառեկ կոտրեցի». կմառախոտի հար իրկուն արտ կճրա։

Գիգա տուն, գիգա ուր կնկան քսա կէնա, կեսա.

— Կնի՜կ, էսօր օձի մի պառեկ կոտրեր իմ, իմ մտեն չէրթա։

Կնիկ լէ կեսա.— Աստծու հայվան էր, հ՚որի՞ կոտրեցիր։

Էդ լէ կեսա.— Կնիկ, կարմիր օձ մե ծրկեն հ'ելավ, ուր ծրկի բոլոր ղաղեց ու գնաց, տեսա, սև մրռդալ, կոլ օձ մի էկավ, քրքջաց, քրքջաց, խորոտիկ կարմիր օձ մի հ'ելավ ծրկի մեջեն, հ'ելավ թուփ թռավ ղաղ հ'ընցավ, իմ խիրեն կաբուլ չէնեց, ըսի՝ զարկիմ ինա սև օձ սպանիմ. թիակ զարկի սև օձուն, քիսավ կարմիր օձու պառեկ կոտրավ։ Կարմիր օձ մտավ ծրկի մեջ, սև օձ դարձավ գնաց. էլ իմ մտեն չընցնի։

Էդ ուր կնկան քսա կէնա, կտեսի չորս խատ զաբութ կղանչին հ'երթից. «Տղա, արի դուրս»։

Էղի ուր չարուխ փբուղ կիաքնի, կէրթա։ Տղեն գելի դուրս։ Էդ չորս խատ զաբութ կեսին. «Տղա, արի՛, էրթանք, մեր թագավոր քըզի կիանչա»։

Էն լէ կեսա.— Ես ոընչբար մարդ իմ, թագավոր ի՞նչ հախ ունի ընձի խանչա։

Կեսա.— Արի, էրթանք, անկարելի ա, պտի գաս։— Կառին ու կէրթան։

Էդ մարդ կառին, կէրթան ճամբախ, կեսին.

— Տղա, չվախենաս։

Կեսա.— Չէ։

Կեսա.— Մենք Քաջանց թագավորու ասքարներն ինք, մենք քաչք ինք։

Կեսա.— Ես հ'որի՞ վախենամ, չվախենամ։

Կեսա.— Էսօր ցերեկ ի՞նչ ես տեսի։

Կեսա.— Բան մ'լէ չէ։

Կեսա.— Իսկի մարդ չսպաներ ի՞ս։

Կեսա.— Չէ։

Կեսա.— Հ'ուհու ջանավար քըզի ռաստ չէ՞կած։

Կեսա.— Մեկ օձ մի էկավ ընձի ռաստ, ես արտ կը ճրենք, կարմիր օձ մի հ'ելավ ուր ծրկեն, ուր ծրկի բոլոր ղաղեց ու գնաց, ուրիշ սև կոլ օձ մի էկավ քրքջաց, քրքջաց, խորոտիկ օձ մի ծրկեն հ'ելավ, էղավ թուփ, թռավ ղաղն հ'ընցավ, փաթվան հ'իրար, ըդ մուռդալ սև օձ ու կարմիր օձ, ես ըսի՝ պտի զարկիմ էդ սև օձ սպանիմ. զարկի սև օձուն, քիսավ կարմիր օձ, պառեկ կոտրավ, կարմիր օձ դարձավ գնաց ծրկի մեջ, սև օձ դարձավ ու գնաց ուր ճամխեն։

Իդա հախս էդ չորս զաբութ կեսին.

— Իմալ օր տեսեր իս, հըմալ քսա էնիս, էն կարմիր օձու պառեկ օր կոտրեր իս, էնի թագավորու խարսն ա, մենք լէ ընոր մըշկներն ինք։

Իդա հախս թագավոր կեսա. «Տղա, էն օձ բերիմ՝ կճանչընա՞ս», իդա հախս դու լէ կեսիս՝ «Խա, կճանչնամ». թագավոր լէ կեսա. «Ուղա՝ իտամ». դու լէ ըսա. «Քու լեզուն իմ բերան ղրվոցու, քու մատնիկ իտաս ընձիկ»։

Իդա հախս կէրթան ճամխով, կէրթան հեռու տեխ մի գետնի էրես, դուռ մի կբացվի, գիշին, կէրթան ցածր։ Կաչքա, կտեսի Քաջանց թագավորի քոշք, օր ուտիս, չխմիս քոշք Ցամաշա էնիս։ Գելին կառին ղէդ տղեն, կէրթան թագավորի մոտ։

Թագավորն ա վըր թախթին նստուկ ա, տղեն կէրթա Ցամանդա կզարկա, ծեռներ յոթ տեխով կկապա, կկանի հ՝առեճ։ Թագավոր հրաման կիտա ընոր, էն ոընջբար մարգ կնստի։

Թագավոր կեսա.— Տղա՛, ի՞նչ իս տեսի ցերեկ։

Կեսա.— Թագավոր ապրած կենա, ես բան չտեսեր իմ։

Թագավորի խարսն ա պառկի ջլով, յորղնով, ծանր կտրա։

Կեսա.— Հ՝ուհու բան չտեսե՞ր իս։

Կեսա.— Մե բան մի տեսեր իմ։

Կեսա.— Ի՞նչ իս տեսի։

Կեսա.— Ես ոընջբար ենք, գացի իմ ցորեն կճրենք, խորոտիկ կարմիր օձ մի, հ՝ելավ ուր ծրկեն ղաղեց ուր ծրկի բոլոր գնաց, տեսա սև կոլ մրողալ օձ մի էկավ ղաղի հ՝առեճ քրքջաց, քրքջաց, խորոտիկ կարմիր օձ մի ծկեն հ՝ելավ. հ՝ելան էդ էրկու օձ փաթվան հ՝իրար, իմ խիրեն կարուլ չէնեց, ես զարկի, էն սև օձուն, քիսավ՝ էն կարմիր օձու պառեկ, կոտրավ, սև օձ փախավ գնաց, էն կարմիր օձ լէ մտավ ուր ծրկի մեջ։

Թագավոր կեսա.— Տղա, օր ես էն սև կոլ օձ բերիմ, դու կճանչընա՞ս։

Կեսա.— Խա, կճանչնամ։

Քաջանց թագավոր դելի կկանի ուր քոշքի տանքի վրեն, քշըշա իրեք օր գիշեր ու ցերեկ, օձ գիգան, ուրանց գլոխ իրարու պառեկին կդրին ու կքաշվին։

Թագավոր կեսա.— Տղա, էն կոլ օձ տեսա՞ր։

Տղեն կաչքա, կեսա.— Չէ, թագավոր ապրած կենա։

Կեսա.— Ապա էլ վո՞ն մնաց։

Կեսա.— Հա՛, մնաց մեկ պառվու տղեն։

Թագավոր մեկ լէ կքշըշա, պառվու տղեն ու ուր պապ դելին գիգան, պապ ուր տղեն կէցկա ուր տակ, ինք գընգնի վրը տղին, կսոխսան ու գիգան, չէղի օր թագավոր տեսի ու սպանա, էն մեկ տղեն ա։

Ընչբար հեռվանց կաչքա, կեսա.— Հա, էն էրկու օձ օր վըր իրար ին, տկի սև կոլ օձն ա։

Գիդան թագավորի հ՝առեճ։ Թագավոր զէտ կոլ օձ կփրթա, կէնա թուԹուն։

Թագավոր տղին կեսա.— Տղա՛, էգ կարմիր օձ իմ խարսն ա։ Դե ուղա, տամ։

Էն լէ կեսա.— Ի՞նչ ուղիմ. կուղիմ օր դու քու լեզուն իմ բերան զըվռցուս։

Կեսա.— Էդ ոըհաթ բան է, բան մը չէ օր դու կուզիս։

Կեսա.— Կուզիմ օր դու քու մատնիկ լէ իտաս ընձիկ։

Կեսա.— Վոլլա, մատնիկ զոռ ա, քու սովրցողի վիզ կոտրի. օր դու ուղեր իս, ես պտի տամ։

Թագավոր լեզուն կդնա բերան, կզըվռցու, մատնիկ լէ կիտա, կառնին էգ իրեք չորս զաբուԹ, գիգան կճամփրցուն։

Մարդ գիգա ուր տուն, էդրա կնիկ կեսա.— Մարդ, էդ իրեք օր դու դո՞ր իր գացե, էն ո՞րն էր քըզի կանչեց տարավ։

Կեսա.— Մարդ չէ։

Գելին կքնին։ Կնիկ կեսա.

— Վոլլա, իրիկ, դու պտի ըսիս, դու դո՞ր ես դացե իդա իրեք օր. քու էուԹեն ընձի պտի քսա էնիս։

Շատ էրես կառնի իրկուց, իրիկ կեսա.

— Լուսուն քզի կեսիմ։

Ցերեկ լէ կեսա.— Իրիկ, վոլլա, դու պտի քու էուԹեն ըսիս։

Կեսա.— Հ՝իրիկուն իմ էուԹեն քըզի քսա կէնիմ։

Հ՝իրիկուն մարդ կնստի ուր տուն, կտեսի օր շուն նիաթ կախի, նստուկ ա, ճետ քսան խավ ուր ետև էկավ։

Ճետ շան կեսա.— Ճար տուր իմ կնկտիք էրթան թառին, հ՝իրկուն աչքերն կմթնա, կէղին խավկուր, չկերնին թառին։

Կեսա.— Կիամաթին թրխ թառին, մեր տեր հ՝իրկուն ուր էուԹեն ուր կնկան քսա կէնա, կմեռնի, մենք կմնանք անտեր, խըլխ վըր մըզի կուրախնան։

Կնիկ լէ դուռն ա, իրիկ լէ։ Մարդ թագավորի լեզուն օր զվրռցուց ուր բերան, խավքու խավքորենքներու լեզուն կխասկնա, էրկնուց էրես օր խավք կու կէնա, էնիկ կխասկնա օր թը ինչ կեսա։ Կնիկ չգինա օր թը իրիկ կխասկնա։

Ճետ իդա հախս կհերսոտի շան վրեն, կեսա.

— Կիամաթին թրխ մեռնի, ճար տուր ես իմ կնկտիք տանիմ տուն։

Էդ մարդ կծիծղա, կքնձղա էդոնց վրեն, էդ կնիկ կեսա.— Դու հ՝որի՞ քըզի քըզի կծիծղաս։

Էն լէ կեսա.— Բան չէ։

Ճետ լէ կեսա.— Հ՝ելի՛, հ՝ելի ես իմ կնկտիք տանիմ տուն, դու հ՝որի՞ քու մըրթներ կախեր իս, կիամաթին թը մեռնի, աչքա տես քսան կնիկ իմ ետև կան ընձիկ, ես իմա՞լ մեկ մարդմ իմ քսան լէ զավթեր իմ, հ՝ինք մեկ մարդ ա, մեկ կնիկ չկերնա զավթա,— կեսա,— թ՝էրթա առի էրկու խուրց վարոց իգա, կնիկ օր իրիկուն ըսեց. «Քու էութեն ըսա», էն լէ զկնիկ թալա հ՝առճև դըրրի, զարկա, ճուր հ՝ըլնա վրեն, ծեծա։ Էդ էրկու խուրց օր ճարթավ, նոր էնիկ կեսա. «Իրիկ, թորա էղնիմ, էլ ես չասիմ թը քու էութեն ասա»,— կեսա,— էն օր ըսեց, կմեռնի։ Է, հ՝որի՞ պտի էսա, հ՝որի՞ պտի մեռնի։

Էդ մարդ էլման կծիծղա, կքնձղա։

Կնիկ կեսա.— Իրիկ, աստված կսիրիս, հ՝որի՞ կքնձղաս։

Էն լէ կեսա.— Բան չէ։

Գելի կէրթա փետի։

Շուն ճար կուտա, ճետ կառի ուր կնկտիք, կէրթա օր թառի։

Էդ մարդ կառի էրկու խուրց վարոց ու դիգա։ Հ՝իրկուն ա, ճրաք կկպուն, իրիկ ու կնիկ կնստին թոնդրա շուրթ, կնիկ կեսա.

— Իրիկ, աստված սիրիս, քու էութեն ընձի քսա էնիս։

Մարդ գելի զկնիկ կկապա սուն ու վի, ճուր գրլնա վրեն ու էդ էրկու խուրց փետ ընդրա վրեն կճարթա։

Կնիկ կեսա.— Ցամա՞ն, թորա էղի, էլ չասիմ թ՝ըսա։

Էդ մարթն ա հըմալ կծեծա ղուր կնիկ, կդալով ճուր կկաթրցու բերան։ Կնիկ քառսուն օր մեկ կշտի վրեն կպառկի, քառսուն օր լէ մեկ կշտին կպառկի։

Էդ մարդ քյախ օր դանի (ուտելու) քյախ կէղնի. էդ մատնիկ օր Քաջանց թաղավորու դնուկ մատնիկն ա, կառի ուր ծեռ, կեսա. «Մատնիկ, քըզնե կուզիմ օդա սողբաթ (սեղան) մի բացվի, կզրվոցու ու ուր լեզվով թարիֆ կէնա, սողբաթ կբացվի, ինչ էմեկ՝, չէմեգ ասես վրեն կգտնվի, ինք օր կուշտ կուտա, սողբաթ կվերցուցվի։ Ինչ քյախ օր անոթնա, ուր մատնիկ կզրվոցու, սողբաթ կբացվի, ինք կուշտ կուտի։

Էդ մարդու կնիկ ծեծելուց քառսուն օր կպառկի, կսախնա, նոր կեղին թարժա իրիկ ու կնիկ. էլ ուր էութեն քսա չէնա, խարիր տարի ծեն դիտա, էլ չմեռնի։

Ինոնք էդ մատնիկի սողբաթից կուտեն, կխմին, կխասնին ուրանց մուրազին, դու լէ խասնիս քու մուրազին։

Հ՚երկնուց իրեք խնձոր իջավ, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լէ՝ անդանջ էրողին։